ՌՈՒԲԵՆ ԿԱՌԼԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է 1963թ. սեպտեմբերի 10-ին Երևանում:

1980-1986 թթ. արաբերեն լեզվի և գրականության մասնագիտությամբ **Բակալավրի եւ Մագիստրոսի կոչում** (դիպլոմ՝ *գերազանցությամբ*), Արևելագիտության ֆակուլտետ, Երեւանի պետական համալսարան:

1993թ. փետրվար-հուլիս - **Քաղաքագիտական դասընթաց /Intensive Political Science Course/,** Հայկազեան համալսարան, Բեյրութ, Լիբանան:

1994թ. մայիս-օգոստոս Դիվանագիտական դասընթաց /Diplomats Course/ Օքսֆորդի, Լիդսի, Էդինբուրգի համալսարաններում, Միացյալ Թագավորություն: Ինտենսիվ դասընթացներ դիվանագիտություն եւ միջազգային իրավունք թեմաներով:

1999թ. Պատմական գիտությունների թեկնածու, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) Արեւելագիտության ինստիտուտ: Ատենախոսության թեման՝ «Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996թթ.»:

2008թ. Պատմական գիտությունների դոկտոր: Հայաստանի Հանրապետության ԳԱԱ, Արեւելագիտության ինստիտուտ: Դոկտորական ատենախոսության թեման՝ «Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000թթ)»:

1986-1988 թթ. Երևանի պետական համալսարանի արտաքին կապերի վարչության ավագ տեսուչ, ԵՊՀ և արտասահմանյան բուհերի միջև համագործակցության ուղղությամբ երկկողմ համաձայնագրերի իրականացման գիտական պատասխանատու:

1988-1992թթ. ԵՊՀ արտաքին կապերի վարչության, օտարերկրյա ուսանողների բաժանմունքի պետ:

1993-1994թթ. ՀՀ ԱԳՆ Առաջին Եվրոպական վարչության կցորդ:
1994-1995թթ. ՀՀ ԱԳՆ Երկրորդ Եվրոպական վարչության երրորդ քարտուղար:
1995թ. Բուլղարիայում Հայաստանի Հանրապետության դեսպանության երկրորդ քարտուղար:

1996-1997թթ. Հունաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության երկրորդ քարտուղար /հյուպատոս/:

1997-1999թթ. Հունաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության առաջին քարտուղար (փոխդեսպան):
1999-2000թթ. ՀՀ ԱԳՆ Աշխատակազմի ղեկավար:

2000թ. նոյեմբեր - 2004թ. հոկտեմբեր ՀՀ ԱԳՆ Ասիայի, Խաղաղ Օվկիանիայի եւ Աֆրիկայի վարչության պետ:
2004-2009թթ. Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան:

2005-2019թթ. Սուդանում, Մարոկկոյում, Հարավային Աֆրիկայում, Լիբիայում և Եթովպիայում ՀՀ դեսպան (նստավայրը՝ Կահիրե)

2008-2009 թթ. Արաբական պետությունների լիգայում Հայաստանի Հանրապետության Լիազոր ներկայացուցիչ:
2008-2009թթ. Աֆրիկյան միությունում Հայաստանի Հանրապետության Մշտական դիտորդ:
2009-2013թթ. Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության Արտակարգ եւ լիազոր դեսպան:

2010-2013թթ. Համատեղության կարգով **Պորտուգալիայում**, **Սլովենիայում, Խորվաթիայում և Մալթայում** ՀՀ դեսպան (նստավայրը՝ Հռոմ):

2019 -2020թթ. ՀՀ ԱԳ նախարարի խորհրդական:

2020-2022թթ. ՀՀ Նախագահի խորհրդական:

Ունի արտակարգ և լիազոր դեսպանի դիվանագիտական աստիճան:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1999-2004թթ. Երեւանի պետական համալսարանի Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ:

2003թ. մարտ - 2004թ. հոկտեմբեր - ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի նորաստեղծ Հարավ Արևելյան Ասիայի երկրների բաժնի վարիչ /ԱԳՆ-ում համատեղության կարգով/:

2014 թվականի սեպտեմբերից մինչ օրս Հայ-ռուսական համալսարանի, Միջազգային հարաբերությունների և հասարակական գիտությունների ինստիտուտի, միջազգային հարաբերությունների և համաշխարհային քաղաքականության ամբիոնի պրոֆեսոր:

Նույն համալսարանի պատվավոր պրոֆեսոր:

2016-2019թթ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի տնօրենի խորհրդական միջազգային համագործակցության հարցերով և Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող:

2024թ. հունվարից մինչ օրս ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Ընդհանուր պատմության բաժնի ավագ գիտաշխատող:

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր Հասարակական գիտությունների» հանդեսի խմբագրական կոլեգիայի անդամ է:

Հռոմի Աշխարհաքաղաքական ուսումնասիրությունների և Հարակից գիտությունների ինստիտուտի (Istituto di Alti Studi in Geopolitica e Scienze Ausiliare, IsAG) գիտական կոմիտեի արտասահմանյան անդամ է:

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի «Արևելագիտության հարցեր» /Journal of Oriental Studies/ եւ «Արաբագիտական ուսումնասիրություններ» /Jornal of Arabic Studies/ գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է:

Ունի պրոֆեսորի գիտական կոչում:

Հեղինակ է Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի աշխարհաքաղաքականության և միջազգային տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ 7 մենագրությունների, այդ թվում «Արաբական երկրների նոր և նորագույն պատոմություն» դասագրքի, եւ շուրջ 30 գիտական հոդվածների:
Օտար լեզուներ՝ ռուսերեն, անգլերեն, արաբերեն, իտալերեն: